«Հայաստանի Հանրապետության տոների եվ հիշատակի օրերի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով սահմանվում է, որ Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր՝ նշվում է ապրիլի 24-ին, ոչ աշխատանքային օր:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանվում է՝ եթե ժամկետի վերջին օրը ոչ աշխատանքային օր է, ապա ժամկետի ավարտի օր է համարվում դրան հաջորդող աշխատանքային օրը:

«Սկայ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի՝ թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/34՝ տեղեկագրում հրապարակված միջանկյալ որոշմամբ՝ որոշման հրապարակման վերջնաժամկետ է սահմանվել 24.04.2020թ.:

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 4-րդ մասով՝ ԳԲՔԱ-ՆԳ-2020/34 բողոքի քննության արդյունքներով հրավիրված որոշման հրապարակման նիստը տեղի կունենա 27.04.2020թ. ժամը ժամը 10:00-ին, ք. Երևան, Կոմիտաս 54բ հասցեում, 1-ին հարկի դահլիճում:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Գ. ՆԵՐՍԻՍՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Օ.ԿԻՐԱԿՈՍՅԱՆ